պանութեան համար, ինչպէս որ Վրաստանումն է: Ուղեւոր Ռուբրիքիս (Rubriquis) վարդապետը, 1253, հաղորդում է Նախիջեւանի մասին, թէ այնտեղ առաջ 800 եկեղեցիներ են եղած, որոնց աւերակներն է նա միայն դտել: Շահ-Աբբասը 1605-ին միմիայն Ջուղայից 40,000 բնակիչներ է դաղթեցրել: Արտաշատ քաղաքը, երբ պարսիկները կործանեցին 370-ին, պէտք է որ 40,000 հայկական եւ 9000 հրէական տներ ունեցած լինի: Զնայած դրան՝ 8-րդ դարում նա այնուամենայնիւ ծաղկած վայր էր: Երբ արաբները 639-ին Դուին քաղաքը առին, կոտորեցին 12,000 հոգի եւ դերեվարեցին 35,000-ին: Անի քաղաքի մասին հաղորդում են պատմիչները, որ նա ԺԱ. դարում 1000 եկեղեցի ունէր եւ 100,000 տուն(?): Տակաւին գոյութիւն ունեցող հսկայ աւերակները դրա դէմ չեն խօսում: Հայաստանը անհաշիւ անգամներ աւերուել է պարսիկների, արաբների, մոնղոլների, տաճիկների ձեռքով: Լենկթիմուրի օրով նա կորցրեց 600,000 ընտանիք, որի մէկ տասներորդը դերի վարուեց, ո՛վ դիտէ՝ ո՛ւր: Շահ-Իսմայիլ Սուֆին 1573-ին Հայաստանը հիմնովին աւերեց, նմանապէս եւ Շահ-Աբբասը 1605-ին»:

Եւ յետոյ, շարունակութեան մէջ.

«Ուղեւոր Շարդէնը տեղեկութիւն է տալիս, որ Երեւանի խանութիւնը (այժմեան դաւառը) 1672-ին տարեկան 32,000 թուման, որ անում է 384,000 արծաթ ռուբլի, հարկ էր տալիս, բացի դրանից նաեւ 150,000 արծաթ ռուբլու նուէր՝ Խանին: Ներկայիս բոլոր հարկերի դումարն է միայն 142,800 արծաթ ռուբլի: Ճամբորդ Օլիարիուս (Oliarius) 1637-ին պնդում է մինչեւ իսկ, որ Երեւանի խանութիւնը Շահին 1,000,000 դուկատ եկամուտ է բերել: Բայց 18-րդ դարուց սկսած՝ այս չքնաղ երկիրը մեծապէս աւերակ վիճակում է դտնուում ու տակաւին չի կարողանում կազդուրուիլ, անշուշտ՝ մասամբ Ներկայիս այնպէ՛ս խառն բնակչութիւն ունենալու պատճառով»:

* * *

Այժմ տեսնենք, թէ դերման ականաւոր ճամբորդը ինչպէս է բնորոշում հայ ժողովուրդի նկարագիրը եւ նրա ներքին կեանքի առանձնայատուկ կողմերը:

«Հայերը պատկանում են աշխարհիս ամենագեղեցիկ ժողովուրդների թուին — ասում է Հաքստհաուզէն — մեր ցեղի արտաքինի մասին: Նրանց մարմնակազմը վերին աստիճանի համաչափ է: Հայերը այնպէս բարձրահասակ չեն եւ մկանուտ, ինչպէս վրացիները: Իրենց մարմնակազմի մէջ նրանք ունին ինչ-որ քնքոյշ բան, աւելի հակամէտ են դիրանալու, քան վրացիները: Հայերը շատ թուխ են: Բուն երկրում ես տեսայ եւ ոչ մէկ շիկահեր (հայ): Նրանք հանդարտիկ են, մեղմաբարոյ, չափաւոր, համեստ եւ վերին աստիճանի քաղաքավարի»:

Իսկ ինչ վերաբերում է հայ ժողովուրդի բնաւորութեանը, նրա նկարագրին՝ Հաքստհաուզէն որոշակի տարբերութիւն է դնում երկրում ապրող, իր հայրենի հողի վրայ նստած հայ գիւղացու եւ քաղաքացու, մանաւանդ երկրից դուրս դտնուող հայ վաճառականի միջեւ: Ինչ վերաբերում է վերջիններին, Հաքստհաուզէն չէ քաշւում ասելու, որ նրանք ծանօթ են որպէս «խաբեբայ, եւ առեւտուրի ու կեանքի մէջ վերին աստիճանի անվստահելի տարր»: Եւ դա Հաքստհաուզէն բացատրում է պատմական եւ իրական պատճառներով — օտար ու թշնամի, հայերին ատող եւ արհամարհող ժողովուրդների մէջ ցրուած լինելու հետեւանքով:

«Բայց — շարունակում է նա — մինչեւ իսկ Պարսկաստանի եւ Տաճկաստանի այդ հայերը իրենց տանը պատուարժան մարդիկ են: Այդտեղ ընտանիքում, տիրապետում են հին, նահապետական եւ մաքուր բարքերը: Նրանք ունին ամուսնու, ծնողի, զաւակի եւ քրոջ ու եղբօր յատուկ՝ ընտանեկան բոլոր առաքինութիւնները: Բարի գործ կատարել սիրում են, հիւրասէր են: Նրանք ամենաբուռն կերպով կպած են իրենց ազգային սովորոյթներին եւ ամենից առաջ՝ իրենց կրօնին: Բացի հրեաներից չկայ եւ ոչ մի ժողովուրդ, որ իր կրօնի համար ա՛յնչափ հալածուած լինի, որը ա՛յնչափ շատ մարտիրոսներ տուած լինի, որչափ՝ հայ ժողովուրդը»:

Որ հայ առեւտրական դասին յատուկ նը-կարագրի արատներն էլ պայմանների արդիւնք են, եւ ոչ թէ «սկզբնական նկարագրի» արդիւնք, այդ «տեսնել կարելի է», շարունակում